ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

29 ՕԳՈՍՏՈՍԻ 2017 ԹՎԱԿԱՆ

Ներկայացվում է ՀՀ Արարատի մարզի հանրակրթական դպրոցների 2016-2017 ուսումնական տարվա ամփոփ արդյունքները և նախանշվում մեկնարկող ուսումնական տարվա խնդիրները:

Նախորդ ուսումնական տարում մարզում գործել են 5 ավագ, 86 միջնակարգ և 21 հիմնական դպրոցներ: Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներում կրթություն է ստացել 31956 աշակերտ: 2592 աշակերտ ավարտել է 9-րդ, 1372-ը՝ 12-րդ դասարանները:

Մարզի ուսումնական հաստատությունները 2016-2017 ուս. տարին սկսել են ԿԳ նախարարի. հրամանով հաստատված 2016թ օրինակելի ուսումնական պլանի համաձայն: Դպրոցների ֆինանսավորումն իրականացվել է՝ ՀՀ ֆինանսների և ՀՀ կրթության և գիտության նախարարների կողմից սահմնված աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևի համապատասխան գործակիցների կիրառմամբ: Տարիֆիկացիաները հաստատվել են ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների պաշտոնների անվանացանկին>> համապատասխան:

Իր ընդգրկվածությամբ հանրակրթական ոլորտը Արարատի մարզում ունի ամենամեծ շահառուների խումբը և, ըստ էության, կրթական այս մակարդակում ծառայությունները գրեթե հավասարաչափ մատչելի են բնակչության բոլոր խմբերի համար:

2016-2017 ուսումնական տարում մարզի 112 հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորել է միջն հաշվով 32805 աշակերտ, որը անցած ուսումնական տարվա համեմատ ավելացել է 307-ով: Դասարանների թիվը նույն ժամանակահատվածում ավելացել է 7-ով՝ կազմելով 1644: Դասարանների միջին խտությունը մարզում կազմում է 19.9 աշակերտ

Մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցներից ներառական կրթություն իրականացնելու իրավունք ունեն 24-ը, որոնցից 21-ը այդ իրավունքը ստացել է 2016 թվականին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 341 երեխաներ ստանում են ներառական կրթություն: Պարբերաբար իրականացվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում:

Մարզի հանրակրթական դպրոցներում աշխատում են 3202 ուսուցիչներ / 2853-ը մարզային ենթակայության դպրոցներում/ և 1391 վարչական, ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողներ: Մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում ուսուցիչների ուսումնական միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 18.7 դասաժամ, իսկ աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը 11.2 /հանրապետական միջին 9.6/: Մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում անցած ուսումնական տարում ուսուցիչների միջին դրույքաչափը կազմել է 110 հազար դրամ:

Մարզում կա 5 վաստակավոր մանկավարժ, պետական պարգևների, ՀՀ նախագահի, վարչապետի, ՀՀ ԿԳ նախարարի և մարզպետի շնորհակալագրերի և պատվոգրերի արժանացած շատ ուսուցիչներ: 43 ուսուցչի շնորհվել է որակավորման 1-ին տարակարգ:

2016-2017 ուստարում Արարատի մարզում գործող 5 ավագ դպրոց /Արտաշատ, Մասիս, Արարատ, Վեդի, Ոսկետափ/ է հաճախել 849 աշակերտ, որոնցից 722-ը սովորել է X-XII դասարաններում: Ավագ դպրոցներում աշխատում են 98 ուսուցիչներ:

Ակնհայտ է, որ կրթական գործընթացի որակը էականորեն կախված է ուսուցչական անձնակազմի դասավանդման մեթոդիկայից և գիտելիքների մակարդակից: Այսօր մարզի համար արդիական խնդիր է ուսուցիչների գիտելիքների և հմտությունների համապատասխանեցումը ժամանակակից պայմաններին: Այս առումով կարևորվել է նրանց մասնագիտական և մանկավարժական վերապատրաստումը և ատեստավորումը: Դասավանդման մեթոդիկայի կատարելագործման նպատակով ամեն տարի մարզի ուսուցիչների 1/5-ը մասնակցել են դպրոց կենտրոններում և Կրթության ազգային ինստիտուտի Արարատի մասնաճյուղում կազմակերպված վերապատրաստման դասընթացներին:

2016թ. կրթության բաժնի կողմից համակարգվել է մարզի 475 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորման նախապատրաստական աշխատանքների գործընթացը: ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստատվորման կարգի համաձայն՝ 2012-2016թթ. Արարատի մարզում պարզ ընթացակարգով ատեստավորվել է 2508 ուսուցիչ:

Մարզում նպատակային աշխատանք է տարվել <<Դասագրքերի շրջանառու հիմնադրամի>> շրջանակներում աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ: Յուրաքանչյուր ուսումնական տարի դպրոցների պահանջարկի հիման վրա աշակերտները ապահովվում են դասագրքերով: Հարկ է նաև նշել, որ դպրոցները կատարել են համապատասխան ներդրումներ դպրոցի բանկային իրենց ենթահաշիվներին՝ ապահովվելով դասագրքերի 100 տոկոս վերարտադրություն:

2016 թվականի ընթացքում դպրոցներին են բաշխվել ԴՇՀ-ի համակարգով հրատարակված 38100 և պետական բյուջեի միջոցներով տպագրված 1-4-րդ դասարանների 57100 անվճար դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ: Անցած ուսումնական տարում մարզի աշակերտների 55.6 % (17778 աշակերտ) ստացել են անվճար դասագրքեր:

Մարզի դպրոցական շենքերի և շինությունների պահպանումը և շահագործումը՝ հատկապես հեռավոր համայնքներում, գտնվում է ՀՀ կառավարության և Արարատի մարզպետարանի ուշադրության կենտրոնում, և յուրաքանչյուր տարի ներդրումների ծավալները ավելանում են:

2016 թվականի ընթացքում մարզում կատարվել է 159.7 մլն ՀՀ դրամի հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի հիմնանորոգման աշխատանքներ, այդ թվում՝

- 4 հանրակրթական դպրոցների հիմնանորոգում (39 մլն. դրամ)՝
- 12 նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքերի հիմնանորոգում (120.7 մլն դրամ), այդ թվում՝

Մարզի 112 հանրակրթական դպրոցներից լոկալ ջեռուցման համակարգ ունեն 82-ը: Մնացած 29 դպրոցներում ջեռուցումը կազմակերպվում է էլեկտրական սալիկներով, 1 դպրոցում վառելափայտով:

2017թվականին սկսվել է Նոր Խարբերդի թիվ 2 դպրոցի շենքի ապամոնտաժման և նոր շենքի կառուցման աշխատանքները: Արևաբույր գյուղի գործող դպրոցի շենքը դիտազննական գնահատմամբ գտնվում է անմխիթար վիճակում և անհրաժեշտություն կա կառուցելու նոր շենք:

Մարզի 112 հանրակրթական դպրոցներից 55-ը ունեն բավարար շենքային պայմաններ, 30-ը կարիք ունեն հիմնանորոգման իսկ մնացած 27-ը ընթացիկ վերանորոգման: Մարզի մի շարք դպրոցական շենքերի վնասվածության մակարդակը դասվում է 3-րդ աստիճանի /Հովտաշատ, Վանաշեն, Նոր Ուղի, Շաղափ, Լուսառատ և Լանջառ/, շենքերը գտնվում են վթարային վիճակում և հրատապ ամրացման կարիք ունեն:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով:

2015 թվականի հունվարից մարզում ներդրվել է ազգային դպրոցական սնունդ ծրագիրը:

Ծրագրի իրականացման համար պետական միջոցների հաշվին մարզին 2017 թվականի համար հատկացվել է շուրջ 329.6 մլն. դրամ գումար (մեկ երեխայի համար 140 դրամ):

Ծրագրի շրջանակներում մարզային ենթակայության 107 հանրակրթական դպրոցների տարրական դասարանների և դպրոցներին կից գործող նախակրթարանների 14787 երեխաների տրվել է դպրոցական սնունդ:

2016թ. նույն ծրագրի շրջանակներում մարզի 7 դպրոցների տնօրեններ և խոհարարներ փորձի փոխանակման և վերապատրաստնման համար մասնակցել են Տամբով քաղաքում կազմակերպված դասընթացներին:

''Երեխաների սնուցման համաշխարհային ֆորումի'' շրջանակներում սեպտեմբերի 8-ին աշխարհի մոտ 40 պետությունների ներկայացուցիչներ այցելել են Արարատի մարզ և 6 հանրակրթական դպրոցներում ծանոթացել սննդի կազմակերպման բնագավառում արձանագրված ձեռքբերումներին:

Չնայած իրականացվող միջոցառումներին՝ կրթական հաստատություններում ներկայումս գրեթե բացակայում են ժամանակակից լաբորատոր սարքավորումները և նյութերը: Դպրոցները խիստ կարիք ունեն առարկայական դիդակտիկ պարագաների, համակարգչային ժամանակակից տեխնիկայի:

Մարզի դպրոցական գրադարանային ֆոնդի գեղարվեստական և մեթոդամանկավարժական գրականության հիմնական մասը հնամաշ է, իսկ մի մասը պիտանի չէ օգտագործման՝ կապված հանրակրթական ծրագրերի փոփոխման հետ:

Արդիական է նաև դպրոցի կառավարման խնդիրը: Չնայած դպրոցի կառավարման ապակենտրոնացման քաղաքականությանը, շատ դպրոցներում կառավարման խորհուրդները ձևական բնույթ են կրում: Խորհուրդների կազմի փոփոխության պատճառով խորհուրդների նոր անդամները տեղյակ չեն այդ կառույցի կանոնադրական և գործառնական խնդիրներին: Անհրաժեշտ է վերապատրաստել խորհուրդների անդամներին և իրականացնել խորհրդի գործունեության կազմակերպման իրավական փաթեթի լրամշակում:

Դպրոցը դեռ չի կայացել որպես ինքնուրույն և ինքնակառավարվող կրթական օղակ: Դպրոցի կառավարման գործում աշակերտների, ծնողների մասնակցությունը դեռևս ցածր է կամ ձևական: Համայնքը, տեղական իշխանությունները չեն շտապում լուրջ աջակցություն ցուցաբերել դպրոցին՝ համարելով, որ դա պետության խնդիրն է:

Վերը նշվածով ներկայացվում է մարզի հանրակրթության բնագավառում առկա պայմանները և գործոնները, որոնք կոչված են պետական պատվերի կատարմանը, այն է՝ հանրակրթական պետական չափորոշիչներին համապատասխան ուսուցման և դաստիարակչության կազմակերպումը:

Ստացած արդյունքները:

Անցած ուսումնական տարում ուսման տարեկան առաջադիմությունը մարզի հանրակրթական դպրոցներում կազմել է 99.6% (նախորդ ուսումնական տարվա համեմատ գրանցվել է 0.2% աճ), ուսման որակը 38.7% (0.5 % աճ):3925 աշակերտ արժանացել է գովասանագրերի, 76 աշակերտ՝ հատուկ նմուշի վկայականի:

Ուսուցման կազմակերպման անհրաժեշտ պայման է աշակերտի մասնակցությունը դասապրոցեսին, որը ամրագրված է Հանրակրթության մասին օրենքով սահմանած աշակերտի պարտականությունների մեջ:

Անցած ուսումնական տարվա ընթացքում կրթության բաժնի կողմից պարբերաբար իրականացվել է վերահսկողություն աշակերտների հաճախումների նկատմամբ: Վերահսկվել են նաև բացակայությունները դասամատյանում գրանցելու գործընթացը:

Մտահոգիչ է աշակերտների գնահատականների օբյեկտիվության խնդիրը: Գիտելիքների արտաքին գնահատման ժամանակ նկատվում են էական տարբերություններ աշակերտների փաստացի գիտելիքների և տարեվերջյան գնահատականների միջև: Պատճառներից մեկը այն է, որ ուսուցիչները աշակերտների գիտելիքները գնահատելիս առաջնորդվում են ոչ թե առարկայական չափորոշիչների պահանջներով, այլ հասարակական դիրք, բարեկամ, միջնորդություն, ծանոթություն հասկացություններով: Գնահատականների արհեստական բարձրացումը կրթության որակի բարձրացման խոչընդոտներից մեկն է, եթե ոչ ամենակարևորը: Այս մոտեցման արդյունքում մենք վաստակում ենք աշակերտի չհիմնավորված բավարարվածություն և ծնողի անտարբերություն:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները: Ամեն ինչ արվել է օլիմպիադայի մասսայականությունը, օբյեկտիվությունը և որակը բարձրացնելու ուղղությամբ:

Առարկայական օլիմպիադայի հանրապետական փուլի արդյունքներով 1 աշակերտ արժանացել է առաջին կարգի դիպլոմի, 2-ը՝ 2-րդ կարգի, 6-ը՝ 3-րդ կարգի դիպլոմի, 10-ը՝ գովասանագրի: Հանրապետական փուլում արդյունքներ ցուցաբերած աշակերտները ՀՀ Արարատ մարզպետ Ա. Գրիգորյանի կողմից պարգևատրվել են պատվոգրերով:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի մարզային փուլին մասնակցել է 479 աշակերտ, իսկ հանրապետական փուլերին 77-ը:

Իրենց ակտիվությամբ և ձեռք բերված արդյունքներով լավ ցուցանիշներ են ցուցաբերել Մասիս քաղաքի թիվ 1, Նոր Խարբերդի թիվ 2, Այնթապի թիվ 2, Վեդու թիվ 1, Արտաշատի թիվ 2, Ավշարի, Արալեզի և այլ դպրոցներ:

Օլիմպիադայի արդյունքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թեև ձեռք բերված հաջողություններին, այնուամենայնիվ, աշակերտների առաջադիմությունը շարունակվում է ցածր մնալ մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, ինֆորմատիկա առարկաներից:

Պետական միասնական քննությունները կազմակերպելու համար քննական կենտրոններ են ընտրվել Արտաշատ քաղաքի N1 և N4 հիմնական դպրոցները: 2017 թվականի միասնական քննություններին մասնակցելու համար դիմում հայտ է ներկայացրել մարզի հանրակրթական դպրոցների 573 շրջանավարտ: Դիմորդներից 510-ը ընդունվել են բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Աճող սերնդի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ռազմահայրենասիրական աշխատանքների կազմակերպումը հանրակրթական դպրոցներում: Այս գործում մեծ դեր ունի զինղեկ ուսուցիչը: Մարզի 112 դպրոցում պետական ուսումնական պլանով նախատեսված իրականացվում է ՆԶՊ առարկայի դասավանդումը՝ հիմնականում արհեստավարժ մասնագետների կողմից (111 զինղեկներից 90-ը ունեն բարձրագույն, 21-ը՝ միջին մասնագիտական կրթություն): Նրանցից 108-ը ունեն սպայական կոչումներ :

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ, ռազմամարզական խաղեր, ռազմադաշտային պարապմունքներ, ինքնաձիգով և մարտական փամփուշտներով կրակային պատրաստության պարապմունքներ:

Մարզում գործող 112 հանրակրթական դպրոցից 111 հանրակրթական դպրոց ունի նախնական զինվորական պատրաստության դասասենյակներ, 107 դպրոց ունի ուսումնական զենք և զինամթերք:

Անց են կացվել <<Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղեր>> մրցույթի մարզային փուլում հաղթող է ճանաչվել Նոր ուղու միջնակարգ դպրոցի թիմը, որը հանրապետական փուլում գրավել է 4-րդ տեղը, իսկ առանձին մարզաձևերից մասնակիցները պարգևատրվել են պատվոգրերով:

<<Տարվա լավագույն զինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>> մրցույթի մարզային փուլի հաղթող է ճանաչվել Մասիսի միջնակարգ դպրոցի զինղեկ Սերգե Ղազարյանը:

Մարզի հանրակրթական դպրոցները համագործակցել են արտակարգ իրավիճակների մարզային կառույցի հետ, կազմակերպվել են սեմինար-պարապմունքներ Արարատի մարզային փրկարարական վարչության ներկայացուցիչների մասնակցությամբ: Մարզի դպրոցների հետ ճշտվել են ՔՊ և ԱԻ տարեկան պլանները:

Մարզային ենթակայության 107 դպրոցնի 2-4-րդ դասարաններում դասավանդվում է <Շախմատ> առարկան: Բոլոր դպրոցներում առարկան դասավանդում են վերապատրաստման դասընթացներ անցած և որակավորման հավաստագիր ստացած ուսուցիչներ: Բոլոր դպրոցները ունեն շախմատի դասասենյակներ, որոնք ապահովված են համապատասխան

գույքով և դիդակտիկ պարագաներով: Պարբերաբար առարկան դասավանդող ուսուցիչների համար կազմակերպվում են սեմինար պարապմունքներ: Բարձր մակարդակով է անցկացվել շախմատ առարկայի օլիմպիադան:

Մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդող մասնագետներից ոչ բոլորն ունեն մանկավարժի որակավորում, հետևաբար դպրոցների տնօրենները լուրջ խնդիր ունեն նրանց զինելու մեթոդա-մանկավարժական հմտություններով:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հաջողության գրավականը, անշուշտ, ուսուցման և դաստիարակության ճիշտ զուգակցումն է:

Մարզի տարածքում պարբերաբար կազմակերպվել են սպորտային, գեղագիտական, մշակութային, ստեղծագործական միջոցառումներ, որոնց հաղթողները մասնակցել են հանրապետական փուլերին:

Դպրոցներում հաճախակի կազմակերպված գեղեցիկ և բազմաբովանդակ միջոցառումները, հետաքրքիր բաց դասերը, գիտա-պրակտիկ կոնֆերանսները, տարաբնույթ, բազմաբովանդակ միջոցառումները մեծապես նպաստել են դպրոցականների համակողմանի դաստիարակությանը:

«Մեր մեծերը» ծրագրի շրջանակներում ուսումնական հաստատություններում կազմակերպվել են միջոցառումներ նվիրված Սրբուհի Տյուսաբին (175-ամյակ), Վահե Հայկին (120-ամյակ), Գրիգոր Խանջյանին (90-ամյակ), Ավետիս Ահարոնյանին (150-ամյակ) և Գրիգոր Զոհրապին (155-ամյակ):

Կազմակերպվել է <<Մենք եղել ենք, մենք կանք, մենք կլինենք>> խորագրով լավագույն գրական ստեղծագործության միջազգային 10-րդ մրցույթը: Մրցույթին մասնակցել են 9-12-րդ դասարանների աշակերտները:

Կազմակերպվել է «Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված «Իմ Հայաստան» համահայկական փառատոնը:

ՀՀ Անկախության 25-ամյա հոբելյանի կապակցությամբ սեպտեմբեր ամսվա ընթացքում ուսումնական հաստատություններում կազմակերպվել են բաց դասեր, գրական-երաժշտական մրցույթներ, հայ անվանի գրական, քաղաքական, մշակութային գործիչների հետ հանդիպումներ:

Անցկացվել է <<Կյանք արժեցող խաղաղություն>>, <<Իմ ներառական դպրոցը>>, <<Իմ համայնքը>>, <<Ես սիրում եմ իմ երկիրը>>, <<Ջուրը իմ կյանքում>> թեմաներով շարադրությունների մրցույթներ՝ լավագույն աշխատանքները ուղարկվել են ԿԳՆ:

<<Հայ ասպետ>> հեռուստախաղի կիսաեզրզփակիչ փուլին մասնակցել են մեր մարզի Մասիս քաղաքի N2 և Շահումյան գյուղի դպրոցները, որտեղ Մասիս քաղաքի N2 հիմնական դպրոցի թիմը ճանաչվեց հաղթող:

Մարզի բոլոր հանրակրթական ոսումնական հաստատություններում անցկացվել են զրույցներ, դասախոսություններ, քննարկումներ <<Թմրամոլությունը դեռահասների շրջանում>> թեմայով՝ աշակերտների զգոնությունը բարձրացնելու նպատակով:

«Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական չորրորդ փառատոնի դպրոցական փուլին մասնակցել են շուրջ 700 աշակերտներ, տարածաշրջանային փուլերին 154 աշակերտներ: Մարզային փուլին մասնակցել են տարածաշրշանային փուլերում հաղթած թվով 23 աշակերտներ, իսկ նրանցից 7-ը մասնակցել է հանրապետական փուլին: Մարզը ներկայացնող աշակերտներից հանրապետական փուլում փառատոնի դափնեկիր է դարձել Արտաշատ քաղաքի N2 հիմնական դպրոցի սան Հովսեփյան Գեղամը, իսկ Արարատ քաղաքի N2 հիմնական դպրոցի աշակերտ Հայկ Մարտիրոսյանը արժանացել է խրախուսական մրցանակի:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության, ՀՀ-ում ՌԴ-ի դեսպանության, Երևանում գիտության և մշակույթի ռուսաստանյան կենտրոնի, <<Ռուսաստանի հայերի միություն>> համառուսաստանյան հասարակական կազմակերպության կողմից անցկացվող 2016 թվականի ռուսաց լեզվի <<Լավագույն ուսուցիչ>> հանրապետական մրցույթին մասնակցել **է** Դիմիտրով գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Նարինե Գրիշայի Մխիթարյանը:

<<Ամենախելացին>> հեռուստամրցույթի քառորդ եզրափակչի 8-րդ խաղի հաղթող է ճանաչվել Արտաշատ քաղաքի N2 հիմնական դպրոցի սան Մարտին Արշակյանը:

Բանակի 25-ամյակի կապակցությամբ անցկացվել է <<Նամակ զինվորին>> շարադրությունների մրցույթը: ԿԳ նախարարություն է ուղարկվել մարզի դպրոցականների 8 լավագույն աշխատանքներ/ Նոր Խարբերդ N1,Վեդի N1,Արարատ ք. N3,Մասիս ք. N2, N6,Շահումյանի, Դալարի/ դպրոցներից:

Մեկնարկել է <<Dasaran.am>> կրթական ծրագրի շրջանակներում իրականացվող <<Նոր սերնդի դպրոց>> վարկանիշավորման մրցույթը:

Կազմակերպվել է <<Ընթերցման հանրապետական օլիմպիադա-2017>> միջոցառումը: Հանրապետական փուլ են երաշխավորվել Արտաշատ քաղաքի N1, Վեդի քաղաքի N2 և Մասիս քաղաքի N2 հիմնական դպրոցներից մեկական երեխաներ:

Հայաստանում Ֆրանկոֆոնիայի միջազգային օրը տոնելու նպատակով մարզի ֆրանսերեն ուսումնասիրող բոլոր դպրոցներում 2017 թվականի մարտ-ապրիլ ամիսներին անցկացվել են միջոցառումներ:

Երեխաներին դպրոցին նախապատրաստելու համար անգնահատելի է նախադպրոցական հաստատությունների դերը: Մարզում գործող 100 նախադպրոցական

ուսումնական հաստատություններում ընդգրկված է 6250 երեխա, որից 5746-ը 77 մանկապարտեզներում, իսկ 613-ը դպրոցահեն 23 հաստատություններում:

<<Կրթության որակ և համապատասխանություն>> վարկային ծրագրի շրջանակներում և մեր համայնքների ներդրմամբ մարզի 23 ուսումնական հաստատություններում իրականացվում է նախադպրոցական կրթական միկրոծրագիր:

2016-2017թ.թ. բացվել են 2 նոր մանկապարտեզ՝ Բյուրավան և Բարձրաշեն համայնքներում:

Դրական աշխատանքի կողքին ունենք նաև չլուծված հարցեր և թերություններ:

Նախադպրոցական հաստատությունների ճնշող մեծամասնությունը ունի փափուկ և կոշտ գույքի, ֆիզիկական դաստիարակության համար համապատասխան մարզագույքի, հիգիենայի պարագաների կարիք :

Մարզի 14 համայնքներում դեռևս չկան նախադպրոցական հաստատություններ: Մարզում շուրջ տարին աշխատում է ընդամենը 51 մանկապարտեզ, մնացած 26 համայնքների ղեկավարները վերազանցում են իրենց լիազորությունները և ժամանակավոր դադարեցնում մանկապարտեզների բնականոն գործունեությունը՝ խախտելով <<Նախադպրոցական կրթության մասին>> ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի պահանջները:

Մարզում հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ չկան, սակայն կան դժվար հաճախող երեխաներ, որոնք հիմնականում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներ են:

ՀՀ <<Կրթության մասին>> օրենքի պահանջներին համապատասխան համայնքների ղեկավարները պարտադիր լիազորության կարգով պետք է իրականացնեն նախադպրոցական և դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը, ապահովեն նրանց ընդգրկումը ուսումնական հաստատություններ: Կուզենայի ավելացնել նաև այն հանգամանքը, որ համայնքների երեխաների ամառային հանգիստի բովանդակալից կազմակերպումը նույնպես համայնքի ղեկավարի պարտադիր լիազորություններից է: համայնքների ղեկավարների հորդորում ենք համայնքում ամառայիբն ամիսների կազմակերպել բակային ճամբարներ՝ ակտիվություն և հետաքրքրություն մտցնելով ինչպես համայնքի երեխաների այնպես էլ բնակիչների առօրյայում:

Առաջարկներ կրթության որակի բարելավման բնագավառում առկա հիմնախնդիրների լուծման համար.

1. Դպրոցի տնօրենին նշանակման և ազատման իրավունքը վերապահել մարզպետին:
2. Օրինակելի ուսումնական պլանում պակասեցնել դպրոցում ուսումնասիրվող առարկաների թիվը: Հատկացվող ժամաքանակը հիմնականում բաշխել հիմնարար առարկաների վրա:

3. Դպրոցի սպասարկող և ուսումնաօժանդակ անձնակազմի համար սահմանել տիպային հաստիքացուցակ /աշակերտների թվին համարժեք/:

4. Վերանայել ուսուցչի մրցույթի անցկացման կարգը: Սահմանել, որ 2 անգամ հայտարարված մրցույթին հավակնորդ չլինելու դեպքում 3-րդ մրցույթին կարող են մասնակցել համապատասխան /հատուկ/ վերապատրաստում անցած հարակից առարկաների մասնագետները:

5. Վերանայել ուսուցիչների ատեստավոման և վերապատրաստման գործընթացները:

6..Աստիճանաբար հրաժարվել քննությունների անցկացման թեստային մեթոդից:

7.Մարզպետարանի կրթության վարչություններին վերապահել տեսչավորման լիազորություններ:

8.Մայրենի և օտար լեզուների ծրագրերը կազմել այնպես, որ ըստ դասարանների նրանք լինեն համահունչ:

Մարզում հանրակրթական դպրոցներում առկա խնդիրներ, որոնք նոր ուսումնական տարում լուծման կարիք ունեն:

1. Նկատվում են չհիմնավորված էական տարբերություններ տարբեր դպրոցների միևնույն հաստիքով աշխատողների դրույքաչափերի միջև: Դպրոցի կենտրոնական օղակը ուսուցիչն է, և մյուս բոլոր աշխատողների դրույքաչափերը համեմատական պետք է լինեն դպրոցի մանկավարժական դրույքաչափին: Դպրոցի տնօրենները դրույքաչափերը ձևավորելիս պետք է հաշվի առնեն նաև դպրոցում սովորող աշակերտների թվաքանակը և դպրոցի որակական ցուցանիշները:

2. Լուրջ խնդիրներ են ծագել ուսուցիչներին մեկ դրույք ժամաքանակով ապահովելու գործում: Ուսուցիչներին մեկ դրույքով ապահովվելու համար անհրաժեշտ է կրճատել շուրջ 420 ուսուցչի, որը մարզում կառաջացնի սոցիալական լուրջ խնդիր:

Դպրոցներում գրեթե չի կատարվում սերնդափոխություն, մանկավարժական կոլեկտիվների ծերացումը խիստ նկատելի է: Ցավալի է, որ մարզում հարյուրավոր նորավարտ, նույնիսկ մանկավարժական բուհերը գերազանցությամբ ավարտած շրջանավարտներ այսօր զրկված են աշխատելու հնարավորությունից:

Խիստ հարգելով և բարձր գնահատելով մեր դպրոցներում աշխատող 289 կենսաթոշակային տարիք ունեցող մանկավարժներին՝ կարծում եմ, որ դպրոցների տնօրենները բարձր մակարդակով պետք է կազմակերպեն մեր մանկավարժներին

վաստակած հանգստի ուղարկելու արարողությունները՝ ստեղծելով հնարավորություն բարձրացնելու մնացած ուսուցիչներին ուսումնական ծանրաբեռնվածությունը:

3. Դպրոցների տնօրենները իրենց աշխատաժամանակի մեծ մասը տրամադրում են ՊՈԱԿ-ի աշխատանքների կազմակերպման գործառույթներ իրականացնելու վրա և քիչ ժամանակ են տրամադրում ուսուցման որակի վերահսկողությանը: Այստեղ անհրաժեշտ է բարձրացնել փոխտնօրենների ակտիվությունը: Անհրաժեշտ է կազմակերպել փոխտնօրենների վերապատրաստումներ և իրականացնել լավագույն փորձի փոխանակում:

Մարզի 2-6 տարեկան երեխաների ընդամենը 35 տոկոսն է ընդգրկված նախադպրոցական ուսումնական հաստատություններում: Անհրաժեշտ է մեծացնել երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական ծառայություններում և ապահովել մատչելիությունը՝ հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար:

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՊԵՏ ԽՍ. ԱՂԱԲԵԿՅԱՆ